# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## 1. Ընթացիկ իրավիճակը և ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախապատրաստվել է ս/թ հունիսի 29-ին «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում դրանց հետ ՀՀ կառավարության հիշյալ որոշման համապատասխանեցումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

## 2. Կարգավորման նպատակը և բնույթը

Ս/թ հունիսի 29-ին ընդունվել են «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքները, որոնց արդյունքում առաջացել են մի շարք անհամապատասխանություններ միևնույն հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման հետ: Նշված անհամապատասխանությունները վերացնելու, ինչպես նաև հասարակական հարաբերությունների զարգացման, ազգային օրենսդրության մեջ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների և իրավակիրառ պրակտիկայում առաջացած բացերը լրացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ նախատեսվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսվող փոփոխության նպատակը որոշման նախագիծը «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցումն է, քանի որ նշված օրենքը ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալը համարում է ոչ թե պարտականություն այլ՝ իրավունք: Բացի այդ, նման պարտականությունը չկատարելու համար որևէ իրավական ակտով հետևանք նախատեսված չէ:

- «բ» և «գ» պարբերություններով նախատեսվող լրացումները նույնպես կատարվում են 25.12.98թ. թիվ 821 որոշումը համապատասխանաբար «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ հոդվածի 9-րդ մասերին համապատասխանեցնելու նպատակով:

- 2-րդ ենթակետով կատարվող լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով. «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը 16 տարին լրացած անձին իրավունք է տալիս իր դիմումի համաձայն ձեռք բերել ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող անձնագիր, որում օտարերկրյա պետությունում վավերականության ժամկետի մասին նշում չի կատարվում: Միևնույն ժամանակ, ՀՀ ոստիկանության պետի 2008թ. օգոստոսի 15-ի «Անձնագրային գործողությունների կարգի պարզաբանումները հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանով հաստատված հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն (նշված հրամանով հաստատված պարզաբանումները վերաբերում են ՀՀ կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշմամբ սահմանված կարգին) անձնագրային ծառայություններին արգելվում է անչափահաս երեխայի անձնագրում օտարերկրյա

պետություններում անձնագրի վավերականության ժամկետների մասին նշում կատարելու համար պահանջել դիմող ծնողի կամ մյուս ծնողի համաձայնությունը: Այսինքն՝ նշված նորմը տարածվում է նաև 16-18 տարեկան անչափահասների նկատմամբ և նախատեսում է վերջիններիս օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետների մասին նշում կատարելու համար ծնողի կողմից դիմում ներկայացնելու պահանջ: Արդյունքում՝ մի դեպքում 16 տարին լրացած անձը ձեռք է բերում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագիր և այն կարողանում է օգտագործել սահմանահատումների համար, մյուս դեպքում՝ նույն տարիքի անձը իրավունք ունի ստանալու 25.12.1998թ. թիվ 821 որոշմամբ սահմանված անձնագիր, սակայն օտարերկրյա պետությունում վավերականության նշում կատարելու համար /որն անհրաժեշտ է սահմանհատումների համար/ պահանջվում է ծնողի դիմում: Նշված անհամապատասխանությունը վերացնելու և միատեսակ վարչարարություն կիրառելու նպատակով նախագծում նախատեսվել է լրացում, համաձայն որի 16 տարին լրացած քաղաքացիների անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի և դրա երկարաձգման վերաբերյալ նշումները կատարվում են նրա ցանկությամբ՝այդ մասին համապատասխան դիմում և պետական տուրքի վճարման անդորրագիր ներկայացնելու դեպքում: Սույն որոշման ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություն կատարել նաև ՀՀ ոստիկանության պետի 2008թ. օգոստոսի 15-ի թիվ 12-Ն հրամանում:

- Նախագծի <u>3-րդ ենթակետով</u> նախատեսվող փոփոխությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ Կանոնադրության 7-րդ և 8-րդ կետերը դուրս են 25.12.98թ. թիվ 821 որոշման կարգավորման շրջանակներից:

- 4-րդ ենթակետով կատարվող լրացումը կատարվում է որոշումը «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանեցնելու նպատակով:

- Նախագծի 5-րդ ենթակետով նախատեսվող լրացումը նունպես կատարվում է 25.12.98թ. թիվ 821 որոշումը «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխանեցնելու նպատակով:

- 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսվում է Կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետից «իսկ 22-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ երեխայի գրավոր համաձայնությունը» բառերը հանել, ինչը պայմանավորված է 2011 թվականի դեկտեմբերի 8-ին «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու հանգամանքով:

- Նույն կետի «բ» ենթակետով նախատեսվող լրացումը նպատակ ունի 25.12.98թ. թիվ 821 որոշումը համապատասխանեցնել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասին:

- 7-րդ ենթակետով նախատեսված լրացումը նպատակ ունի կանոնակարգելու այն դեպքերը, երբ անձն ունի երկու անձը հաստատող փաստաթղթեր՝ նույնականացման քարտ և 25.12.98թ. թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիր և տվյալի փոփոխման հիմքով դիմում է փոխանակելու նույնականացման քարտը, սակայն չի ցանկանում փոխել անձնագիրը: Առաջարկվող լրացմամբ նախատեսվում է նմանատիպ դեպքերում անձնագիրը լիազոր մարմնի որոշմամբ ճանաչել անվավեր՝ քաղաքացու մոտ տարբեր տվյալներով անձը հաստատող փաստաթղթերի

առկայությունը բացառելու համար: Բացի այդ՝ նման կարգավորում է նախատեսված «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով:

- 8-րդ ենթակետով նախատեսվող փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով անձնագիրը կորցնելիս նոր անձնագիր ստանալու համար դիմելու դեպքում լրացուցիչ ժամկետ չի պահանջվում /անկախ փոխանակման հիմքից անձնագիրը տրամադրվում է օրենքով սահմանված ժամկետում/, մինչդեռ 25.12.98թ. թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու համար որոշման 15-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն նոր անձնագիրը տրամադրվում 15-րդ օրը, այն պարագայում, երբ մնացած բոլոր դեպքերում անձնագիր տրամադրելու համար որոշմամբ նախատեսվում է ավելի կարճ ժամկետ: Հետևաբար քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու, անձնագրի տրամադրումն անհարկի չձգձգելու և միասնական վարչարարություն կիրառելու նպատակով նպատակահարմար է հիշյալ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել և որոշմամբ նախատեսված անձնագիրը քաղաքացուն հանձնել 14.1. կետում սահմանվող 10-օրյա ժամկետում:

- 9-րդ ենթակետով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը, քանի որ այն պրակտիկայում երբևէ չի կրառվել: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ տարածքում օգտագործելու նպատակով անձը կարող է ձեռք բերել նույնականացման քարտ, հետևաբար լրացուցիչ անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու անհրաժեշտությունը բացակայում է:

- 10-րդ ենթակետով նախատեսվող լրացումը նպատակ ունի 25.12.98թ. թիվ 821 որոշումը համապատասխանեցնել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին:

**3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ոստիկանության կողմից:

**4.Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշումը կհամապատասխանեցվի միևնույն հարաբերությունները կանոնակարգող «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներին:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

/մլն.դրամ/

| Պետական բյուջեի կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ցուցանիշներ | ընթացիկ 2016թ. | | Հաջորդող 3 տարիները | | |
| | | | 2017թ. | 2018թ. | 2019թ. |
| | Ըստ 2016թ. պետական բյուջեի | Փոխու-թյունը 2016թ. պետական բյուջեի համեմատ | Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ | Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ | Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.Եկամուտներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1.1. պետական բյուջեի եկամուտներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1.2. ՏԻՄ եկամուտներ | X | X | X | X | X |
| 2. Ծախսեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.1. պետական բյուջեի ծախսեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր | X | X | X | X | X |
| 3. Ֆիսկալ ազդեցության գնահատական | | | | | |
| 3.1. պետական բյուջե | | | | | |
| 3.3. ՏԻՄ բյուջե | | | | | |
| 4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով) | | | | | |
| 4.1. Եկամուտների գնահատում | | | | | |
| 4.2. Ծախսերի գնահատում | | | | | |
| 5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) | | | | | |

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել Հայաստանի ոստիկանության պետի 2008թ. օգոստոսի 15-ի «Անձնագրային գործողությունների կարգի պարզաբանումները հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանում:

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ**